

ՆԱԽԱՆՁ

Ներկայիս մեծ է թիւը անոնց, որոնք միշտ նախանձով կ'այրին, երբ իրենց եղբոր յաջողութիւնը տեսնեն յատկապէս, երբ ան նիւթապէս կամ արհեստով եւ կամ իր ուսուցումներուն համար կը յարգուի շատերուն կողմէ: Նախանձոտները, երբ այս տեսնեն կը հալին ու կը մաշին, բամբասանքի խօսքեր կը յօրինեն անոր մասին եւ Աստուծոյ կամքին հակառակ կը շարժին, որ իրենց եղբոր այդ յաջողութիւնը չնորհած է; Ահաւասիկ թէ ինչու, նոյնիսկ եթէ նախանձոտը մեծապէս ճշմարիտ եւ բազմաթիւ առաքինութիւններու տէր ըլլայ, կուտական սրբութիւն ունենայ, օրուան ընթացքին պահեցողութեամբ եւ ճշմութեամբ ինքզինք մաշեցնէ գիշեր եւ ցերեկ, քուրձով եւ մոխիրով մշտահոս արցունքներ թափէ, իր ողորմութիւններովը աղքատանայ, մեծամեծ հրաշքներ գործէ, աղօթքներով եւ փառաբանութեամբ երկիրքի հրեշտակներուն նմանի, նոյնիսկ մարտիրոսանայ ու կրակի մէջ այրի եւ սակայն իր սրտին մէջ նախանձ եւ չարութիւն ունենայ, մարդասպաններէ եւ շնացողներէ աւելի պիղծ եւ մեղքերու մէջ լողացող ամբարիշտներէն աւելի ամբարիշտ պիտի ըլլայ: Ո՞ր չարիքը ուրեմն կրնայ աւելի ժանտագոյն ըլլայ, քան՝ նախանձը, որ կրակէն աւելի այրող է, սուրէն աւելի բնաջնջող է եւ կը բնաջնջէ գայն ունեցողները: Ո՞վ կրնայ հանդուրժել այդ բոցին եւ կամ ի՞նչ տեսակի ներում պիտի ունենայ նման սատանայական անձերը: Արդարեւ ո՛չ մէկ չարիք նման է նախանձին եւ չարակնութեան, որովհետեւ միշտ մեղքի մէջ է, գիշեր ու ցերեկ ան չի դադրիր սպանութենէն, որովհետեւ իր հետ կը կրէ միշտ իր չարութիւնները:

Տէր հեռացուր մեր կեանքէն նախանձը

ԿՂԵՐԻԿՈՍ

Համաձայն ձեռնադրութեան Մաշտոցին, կղերիկոսները խոնարհագոյն ծառայողներն են եկեղեցւոյ:

Անոնց սահմանուած է եկեղեցւոյ մաքրութիւնը՝ որպէս աւելածուներ, եւ սաղմոսներու ընթերցումը՝ որպէս սաղմոսբազուներ:

Ձեռնադրութեան պահուն յատկանշական խօսքը, որ ձեռնադրիչ եպիսկոպոսը կ'ուղղէ ընծայալներուն հետեւեալն է.

Ուշադրութեամբ մտիկ ըրէք եւ իմացէք, ինչ որ բերնով կ'երգէք՝ սրտով պիտի հաւատաք, եւ այն նշմարտութիւններուն, որոնց սրտով կը հաւատաք՝ գանոնք գործով պիտի ցոյց տաք:

Երբ այս պատուէրը կ'ուղղուի եկեղեցական ծառայութեան սկզբնաւորութեան առաջին ֆայլերը առնող կղերիկոսներուն, բնականաբար հասկնալի է, որ ան կ'ընդգրկէ եկեղեցական բոլոր աստիճաններուն եւ կարգերուն մէջ գտնուող բոլոր կոչեցեալները, որոնք նուիրուած են եկեղեցւոյ ծառայութեան: Հետեւաբար անոնք պարտին, որպէս գերագոյն հրամայական, հաւատքը կեանքի վերածելով, սկզբունքով գործելու եւ անսակարկ ծառայութեամբ արժեւորելու իրենց կոչումը:

Հագուագիւտ գործածուող բառ մըն է կղերիկոսը, որուն մեմք կը հանդիպինք Ձեռնադրութեան Մաշտոցին մէջ, որպէս եկեղեցւոյ ծառայող աստիճան: Անոր կը հանդիպինք, նաեւ ինկարկութեան շարական «Բարեխօսութեամբ...»-ին մէջ:

Այսօր կղերիկոսութեան աստիճանը միացած է դպրութեան, եւ երբ պատանի ընծայեալներ դպրութեան պիտի կոչուին, նախ կղերիկոսութեան երկու աստիճանները կը ստանան, որոնք են Աւելածութիւնը եւ Սաղմոսբազուութիւնը, եւ ապա դպրութեան չորս աստիճանները:



ԲՈՒ ԽՕՄԲԻ ԽՄ ՌՅԲԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԸԱԽԻՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ԺՁ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 26 ՆՈՅՄԲԵՐ 2023 ԹԻԻ 48

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԵԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Ես. 36.1-9: Ա. Թս. 1. 1-10: Ղկ. 12.13-31

ՅԻՍՈՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ

ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ 12.13-31

Ժողովուրդէն մէկը Յիսուսի ըսաւ. «Վարդապէ՛տ, ըսէ՛ եղբօրս, որ մեր հօր ձգած ժառանգէն իմ բաժինս տայ ինձի»: Յիսուս պատասխանեց. «Ո՛վ մարդ, ո՞վ զիս դատաւոր կամ իրաւունքի բաժանարար կարգեց ձեր վրայ»: Ապա դառնալով ժողովուրդին, շարունակեց. «Նայեցէ՛ք եւ զգուշացէ՛ք ազատութեան բոլոր տեսակներէն, որովհետեւ մարդու մը կեանքը կախեալ չէ իր ամբարած հարըստութենէն»:

Յիսուս անոնց առակ մըն ալ խօսեցաւ եւ ըսաւ.- «Հարուստ մարդ մը կար, որուն արտերը առատ բերք տուին: Ան ինքնիրեն կը մտածէր ու կ'ըսէր. Ի՞նչ ընելու եմ, որովհետեւ հունձքս ամբարելու համար շտեմարաններուն մէջ տեղ չմնաց: Այո՛, գիտեմ ինչ պիտի ընեմ: Պիտի քակեմ շտեմարաններս, աւելի ընդարձակները պիտի շինեմ եւ հոն ամբարեմ ցորենս եւ ամբողջ բերքերս: Ապա ես ինձի պիտի ըսեմ.- Ո՛վ մարդ, քանի որ երկար տարիներու համար ամբարած հարստութիւն ունիս, հանգիստ ըրէ՛. կե՛ր, խմէ՛ եւ ուրախացի՛ր»: Բայց Աստուած ըսաւ իրեն. «Անմի՛տ մարդ, այս գիշեր իսկ հոգիդ քեզմէ պիտի առնեն, որո՞ւն պիտի մնայ պատրաստածդ»: Եւ Յիսուս եզրակացուց. «Նոյնն է պարագան բոլոր անոնց, որոնք միայն իրենց անձերուն համար հարստութիւն կը դիզեն, փոխանակ Աստուծոյ աչքին հարստանալու»:

Ապա Յիսուս իր աշակերտներուն ըսաւ. «Մի՛ մտահոգուիք ձեր ապրուստին համար, թէ ինչ պիտի ուտէք եւ ոչ ալ ձեր մարմիններուն համար, թէ ինչ պիտի հագնիք: Որովհետեւ կեանքը աւելի կարեւոր է քան՝ ուտելիքը եւ մարմինը աւելի կարեւոր քան՝ հագուստը: Դիտեցէ՛ք ազնաւները, որոնք ո՛չ կը սերմանեն, ո՛չ կը հնձեն, ո՛չ շտեմարաններ ունին եւ ո՛չ ամբարներ, սակայն Աստուած կը կերակրէ զանոնք: Աստուած պիտի չկերակրէ՞ ձեզ, դուք՝ որ Աստուծոյ աչքին թշուուներէն գերազանց էք: Մտահոգուիլը, որեւէ ձեռով ձեր կեանքը կ'երկարէ՞: Եթէ նուազագոյն բանը չէք կրնար ընել, ինչո՞ւ ուրեմն ուրիշ բաներով կը մտահոգուիք: Դիտեցէ՛ք եւ տեսէ՛ք, թէ ինչպէս կ'աճի դաշտի շուշանը: Ո՛չ կը հիւսէ եւ ո՛չ ալ հագուստ կը կարէ: Հաւատացէ՛ք, որ նոյնիսկ Սողոմոն իր ամբողջ փառքին մէջ անոնցմէ մէկուն պէս գեղեցիկ չկրցաւ հագնիլ: Եթէ Աստուած այդպէս աղուոր կը հագցնէ խոտը, որ այսօր դաշտին մէջ է եւ վաղը կրակը պիտի նետուի, ձեզ աւելի լաւ պիտի չհագցնէ՞, թերահաւատներ:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՍՐԲՈՑՆ ԳՐԻԳՈՐԻ ԵՒ ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ՍՔԱՆՉԵԼԱԳՈՐԾ ՀԱՅՐԱՊԵՏԱՅՆ ԵՒ ՄԻՒՍ ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Գրիգոր Սֆանջելագործ Հայրապետ ծնած է Նեոկեսարիա անունով քաղաքի մը ազնուական ընտանիքի երգիչին տակ՝ 213 թուականին, ուր նաեւ կը ստանայ իր ուսումը եւ կը պատրաստուի մասնագիտացնալ օրէնսգիտութեան եւ հոետորութեան մէջ:

Այդ միջոցին Գրիգորի բնայրը կը նշանակուի Պաղեստինի կուսակալ: Ուստի, Գրիգոր եւ իր եղբայրը կ'ընկերանան իրեն եւ կը փոխադրուին Կեսարիա, որ այն ժամանակ վարչական կեդրոնն էր Պաղեստինի: Այնտեղ երկու եղբայրները կը հանդիպին այդ օրերու եկեղեցւոյ նշանաւոր հայրերէն՝ Ռոդֆինէսին, եւ այնքան կը տրպաւորուին անոր ուսուցումներէն, որ 6-7 տարիներ կ'աշակերտեն անոր եւ կը սորվին հոետորութիւն եւ ի վերջոյ քրիստոնեայ կը մկրտուին:

Գրիգոր՝ ուսումը աւարտած Ռոդֆինէսի հմուտ ուսուցումներու շունչին տակ, կը վերադառնայ իր ծննդավայրը, ուր ժամանակ մը կ'աշակերտէ Կապադովկեան Կեսարիոյ Փիլիպիանոս անունով եպիսկոպոսին, որմէ կը սորվի քրիստոնէական վարդապետութիւնը եւ եկեղեցւոյ կարգն ու կանոնը: Ապա եպիսկոպոս կը ձեռնադրուի Նեոկեսարիոյ քաղաքին համար, ուր աւանդութիւնը կ'ըսէ, թէ 17 քրիստոնեաներ միայն կային իր ձեռնադրութեան ժամանակ եւ իր վախճանման ժամանակ մնացած էին միայն 17 հեթանոսներ...:

Գրիգոր իր կատարած հրաշագործութիւններուն համար կը կոչուի Սֆանջելագործ Հայրապետ: Կը վախճանի 270 թուականին, իր ետին ձգելով բազմաթիւ աշխատութիւններ, որոնց մէջ նաեւ քրիստոնէական ուսուցումներ, որոնք կ'օգնեն նորադարձ քրիստոնեաներուն ամրապնդելու իրենց հաւատքը եւ ապրելու քրիստոնէական կեանք մը:

Նիկողայոս Սֆանջելագործ եւ միւս Նիկողայոս Հայրապետ

Եկեղեցական տօնացոյցը կը յիշատակէ երկու Նիկողայոս հայրապետներ, որոնք սակայն ըստ սուրբերու վարձագիրներուն եղած են միեւնոյն անձը, միեւնոյն կենսագրութեամբ:

Ըստ վարձագիրներու, Նիկողայոս հայրապետ եղած է Փոքր Ասիոյ Լիկիա կոչւած գաւառի մեծահարուստ ընտանիքի մը գաւազն: Ան փոքր տարիքէն որք մնալով, կը մեծնայ Նիկողայոս Երէց անունով ծանօթ, իր եպիսկոպոս մօրեղբօրը խնամքին տակ:

Ան տպաւորուելով Քրիստոսի կողմէ մեծահարուստ երիտասարդին ուղղուած կոչէն, թէ՛ «Եթէ կ'ուզես կատարել ըլլալ, գնա՛, ինչ որ ունիս՝ ծախէ եւ աղֆատներուն տուր, այդպիսով երկինքի մէջ գանձ պիտի ունենաս, եւ յետոյ հետեւէ՛ ինձի» (Մտք. 19-21), կը ծախէ իր հօրեական ժառանգութիւնը եւ կը բաժնէ աղֆատներուն: Եպիսկոպոս կը ձեռնադրուի Միւռնայ քաղաքին եւ իր ոյժերը ի սպաս կը դնէ աղֆատներուն եւ կարօտեալներուն օգնութեան:

Նիկողայոս հայրապետ այնքան կը խորանայ իր հաւատքին մէջ, որ Աստուծմէ կը պարգեւատրուի հրաշագործութեան շքանշանով: Կը պատմուի թէ ան նոյնիսկ նաւարկութեան մը ընթացքին, աղօթքով կը դադրեցնէ ծովային փոթորիկ մը եւ խաղաղեցնելով ծովը կը փրկէ նաև ու ցամբորդները, որով կը դառնայ նաւաստիներուն պաշտպան Սուրբը: Նիկողայոս, նաեւ եղած է կերպարը հանրածանօթ Կաղանդ Պապային՝ Սանթա Գլորիան (որ աղաւաղուած ձեւն է St. Nicholas-ի), որով նաեւ կը նկատուի մանուկներուն հանդէպ սէր ու գուրգուրանք ունեցող Սուրբը:

Նիկողայոս Սֆանջելագործ հայրապետ Լիկիանոս կայսեր հալածանքներու ընթացքին ժամանակ մը կ'աֆտորուի աթոռէն եւ ապա դարձեալ կը վերադառնայ: Ան ներկայ կ'ըլլայ Նիկիոյ մէջ 325-ին գումարուած Եկեղեցւոյ Տիեզերական առաջին ժողովին, որմէ տարի մը ետք կը վախճանի:

Հ Ո Գ Ե Ի Ո Ր Պ Ա Տ Գ Ա Ս

ՅԱՆՁՆԱԳՊԱՏԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԿՈՒՌՑՆԷ ՄԵՉ

Յիսուս այս առակը խօսեցաւ անոնց, սակայն անոնք չհասկցան, թէ ինչ ըսել կ'ուզէր իրենց: Ուստի Յիսուս կրկին ըսաւ անոնց.- Հաստատ գիտցէք, թէ ես եմ ոչխարներուն դուռը (Յհ.10.6-7): «Խօսեցաւ անոնց», այսինքն՝ Փարիսեցիներուն եւ Օրէնքի ուսուցիչներուն մասնաւորաբար եւ հասարակ ժողովուրդին ընդհանրապէս: «Մակայն անոնք չհասկցան»: Այո, չհասկցան, որովհետեւ կոյր էին հոգիով: Մեղքը կուրցուցած էր զիրենք: Յանձնապատասխանութեան ոգին խաւարեցուցած էր իրենց ներքին տեսողութիւնը: Անոնք իրենք զիրենք արդար կը կարծէին եւ միակ արժանիները՝ երկինքի արքայութիւնը ժառանգելու: Ուստի, չկրցան Քրիստոսի անձին մէջ արքայներուն Արքային ներկայութիւնը տեսնել, աստուածային խոստումներուն իրականացումը տեսնել:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ Ի Ք Հ Ո Գ Ե Ի Ո Ր Դ Ա Ս Ը

Զգոյշ ըլլանք յանձնապատասխան ըլլալէ, այսինքն՝ մեր անձերուն հանդէպ կոյր վստահութիւն ունենալէ: Ատիկա կրնայ պատճառ դառնալ, որ չտեսնենք ճշմարտութիւնը Յիսուսի անձին մէջ:

ԱՌԱԿ 2.5

Եթէ իմաստութիւնը միշտ ներկայ ըլլայ մէջդ եւ գիտութիւնը անձիդ համար օգտակար նկատես, այն ատեն բարի խորհուրդները քեզ պիտի պահեն եւ մաքուր մտածումները քեզ պահպանեն, որպէսզի քեզ փրկեն չար ճանապարհէն եւ նենգամիտ մարդէն:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒԶԵՍ...

ԵՐԲ ԱՍՏՈՒԾՈՅ ԵԿԵՂԵՅԻՆ ՄԱՍԻՆ ԿԸ ԽՈՐՀԻՍ, Կարդա՛ ՍԸՂՄՈՍ 45

Միտքս գեղեցիկ մտածումներով կ'եռայ, լեզուս արագագիր քարտուղարի մը գրիչին պէս կը սահի՝ այս տողերը ընծայելու համար թագաւորին: Գեղեցկութեամբ գերազանց ես բոլոր մարդոց մէջ, շնորհք կը կաթի շրթներդ, իրաւամբ Աստուած քեզ օրհներ է յախտեան: Կապէ՛ սուրը մէջքիդ, ո՛վ դուն հզօր, նշանակը քու մեծ փառքիդ ու վայելչութեանդ: Լարէ՛ յաջորդութեանդ աղեղը, հեծիր կառքդ՝ պաշտպանելու համար ճշմարտութիւնը, հեզութիւնն ու արդարութիւնը, եւ թող աջդ սքանչելի յաղթանակներ ապահովէ: Մրուած նետըդ, հզօր թագաւոր, թշնամիներուդ սիրտը թող մխրճուի, ժողովուրդները ոտքերուդ իյնան: Քու աթոռդ, ո՛վ Աստուած, յախտեանական է, թագաւորական իշխանութիւնդ արդար իշխանութիւն է: Արդարութիւնը կը սիրես եւ անիրաւութիւնը կ'ատես: Ահա թէ ինչու՝ Աստուած, քու Աստուածդ, ուրախութեան իւղով օծեց քեզ, բոլոր թագաւորներէն վեր կարգելով: Չմոռս, հալուէ եւ կասիա կը փութեն զգեստներդ, լարաւոր նուագարանները քեզ կ'ուրախացնեն փղոսկրազարդ պալատիդ մէջ:

Միշտ աղօթենք առանց վհատելու բանալով եւ կարդալով Սաղմոսագիրքը: